

խով պաշտպանել իւր թշուառ տիրոջ դատը. և բնականապէս ժամանակագիրն երբ Գարաէլի վրայ է խօսքն՝ զանց չընեք ոչ մի գործ, ոչ մի մանր գէպք և ոչ թուական, մինչդեռ ուրիշ շատ և շատ նշանաւոր անձինք հազիւ լինէ պարզապէս և հարեանցի յիշատակութեան նիւթ հղած են: Իւր անձը վերջապէս գրեթէ Լևոնի Ե սեղը կը բռնէ, որ որչափ ալ սիրելի է, չի կրնար ասոր ալ արգելք ըլլալ: Այս պատճառաւ չուզելով անոր կենսագրութիւնն ընել՝ կը հրաժարիմ պատմել անոր առաքելութիւնները: Ընթերցողք ժամանակագիրուքեանս՝ պիտի կարենան լուս և ճանաչել զայն, եթէ պատշաճ դասն:

Մէկ ուրիշ գործի մը յիշատակութեամբ կը վերջացնեմ իմ խօսքս, որ իտալիոյ եկեղեցական պատմութեան հետեւապօռնի: Ժամանակագիրուքիս մեզի կը ծանուցանէ թէ՛ յամին 1383 « Ապրիլ 11, Մեր սուրբ Հայրապետն՝ ի ժողովի կարգինալաց և ներկայութեամբ համագումար ժողովին այսպէս խօսեցաւ: Եղբայրն Յովհան, խոստովանահայր թագաւորին և եպիսկոպոս քաղաքին Տորտիպօլոյ, ՚ի փոխարէն իւր բարի ծառայութեանցը, նեղութեանց և վատակոյցը, որով վերոյշեալ եղ-

բողոքն պաշտպանեց ՚ի պատիւ սուրբ Եկեղեցւոյ՝ հետամուտ ըլլալով ազատութեան թագաւորին Հայոց », որ ձեռնադրեցաւ յամենան օգոստոսի ՚ի մայրեկեղեցւոյ Սեկովիոյ: Եպիսկոպոս ստրանն որուն վրայ է խօսքը, և որ ժուռանակագիրուքեան մէջ տեղ մը Գորդիբի և Գորդէբի անուանուած է, Տորտիպօլիան է Բենեւենդոյի Նահանգէն և ԺԳ և ԺՁ դարուց մէջ կանգուն էր: Յովհան Դարաէլ եօթներորդ և վերջինիքեր անուանեալ եպիսկոպոսն եղաւ: Ռեկէլի զանիկա կը յիշէ, բայց իբրև եպիսկոպոս չէր ճանչնար, ապօրինաւոր կը համարի, և ծանօթութեան մը մէջ, այսպէս կ'ըսէ անոր համար. « Ի բայ կը թողուի իբրև ապօրինաւոր, եւ Դարաէլի պատմութիւնն իր այս համառօտ պարբերութեան մէջ կը պարունակուի. « Յովհաննէս յամին 1383 յունիս 16 այս եկեղեցւոյ եպիսկոպոս ընտրուեցաւ, Կղմէս Է դերապապէն, հատուցանելով սովորական 20 փող »:

Վերջացնելով խօսքս, կարծեմ թէ մարթ է հուանորէն համարել թէ Յովհան Դարաէլն է հեղինակ, կամ գէթ տուն տուող ժամանակագիրուքեան Հայոց:

ՌԻՄԵՆՈ ՌՈԳԵՐ

Հ Ա Յ Ա Ձ Գ Ն

ԵՒ ԻՌ ԱՌ ՄԱՐԿԿՈՒԹԻՒՆ ԸՐԱՄ ՕԳՈՒՏԵՐԸ

(Տ՛:ս Հա. ԼԹ. Պր. Ա. Բ. Գ. Էջ 3, 97, 199. Հա. Խ, Պր. Ա, Էջ 3):

Կայսերը Բիւզանդիոնի տեսնելով թէ օր քան զօր Արաբայիք և թուրք իրենց տէրութեան գաւառքը կը գրաւեն, արևմտեայց հետ դաշն կը հաստատեն, կ'ըսէ պատմութիւնն, և զանոնք օգնութեան կը կանչեն յարեկը: Բայց կը յաւելու թէ անդէն և անդ յետ առաջին արշաւանաց թաշակրաց կը զղան և շրջակայ թշնամիներէն աւելի

արևմտեան գաշնակիցքը կասկածելի կ'ըլլան անոնց. և անհաշտ ատելութիւնը կը տիրէ Յունաց և Լատինաց մէջ, որով առ ժամանակ մի կ'ընդհատին առևտրական յարաբերութիւնքը Արևմտեայց ընդ Կ.Պօլսի: Այս առաջին պատճառն է դեռ: Իսկ երկրորդ պատճառն կամ արգեքն էին Ասիոյ բարբարոս ժողովուրդքն. որոնք ընդունե-

լով զմահմտականութիւն՝ կը սպառնային քրիստոնէից մանաւանդ պատերազմասէր կատաղի հրոսակք թըրքաց հետզհետէ կը յառաջէին յԱսիոյ ցեղերս վտարորնի և կը կողպաւէին Սև ծովուն մէջ գանուղ վաճառարործ նաւերը: Սակայն ամենէն աւելի Յոյնք, որոց այն ժամանակի ծայրայեղ տկարութեան հետ զուգակից էր նոյնպէս գոռուղութիւն ինչ ծայրայեղ, կ'ըսէ քննադատ զք նշանաւոր, կը ջանային արդիւրէ վենետիկեացոյ վաճառականութեան յառաջ խաղաղութիւնը. արկարացած ժամանակին՝ զԳննուացիս և զԲիզանիոս գրգռելով անոնց դէմ, իսկ զօրաւոր եղած միջոցին՝ յաճախ բըռնութիւն բանցընելով: Սակայն ընդունայն էին բովանդակ խարխալեալ ճիգն կոմենենոսեանց, և Յունաց սակաւաթիւ տարրերաց բռնութիւնք, որոնք մագիլտի պէս չեմ գիտեր ինչպիսի առաձգական զօրութեամբ իւր չորս կողմը հոծելով այլասեռ ժողովրդոց բազմութիւնը, կ'ուզէին նորակազմ հասարակագետութեան մը դէմ դնել, որուն զօրութիւնը նորարոյթով ծառի մը պէս յարմար գիրք և նպաստ ևս գտնելով կիլիկիոյ և Միջերկրականի նահանգաց մէջ, Հայոց մարդասէր օժանդակութեամբ օրէ օր անդրագոյնս կը յառաջէր իւր հերակլեան քայլերն և Ստորին ինքնակալութեան զօրութիւնը խորտակելու մրցման մէջ էր:

Այս ժամանակամիջոցիս, այսինքն Ա խաչակրաց արշաւանքէն վերջը կ'ընդհատի առ ժամն արևմտեան վաճառականութիւնն ընդ Կ.Պօլսի և ընդ Սև ծովու: Ընդհատենք ուրեմն մինք ալ մեր տեսութիւնն այս գծիս վրայ, և գարձքնենք Միջերկրականի և քոբուն Հայոց հետ միաւորող դժին վրայ և դիտենք երկուստեք Հայոց և Լատինաց վաճառականական մեծ գործանէութիւնը:

Այս մասին Ժ. դարու մասնագիրք, Գ. Ա. Մարինէն սկսեալ, ոչ միւս Մարինը որ գրեց վենետիկեաց պատմութիւնը և ոչ ալ անոնց հետեող վերջի ժամանակի պատմագիրք զոյգ ընդ Հե.

րէնի, կրցան մեզի անգեղ զոհարող յիշ անգեղութիւններ: Այժմ՝ մենք առանց զանց ընելու նախադիտակեալ մասնագիրքը՝ աւելի Գազարինեայ և Գանէսարինի յիշատակարանաց վրայ հիմնեալ, զորս գեռ ներկայ ժամանակներս հրատարակեցին, կ'ուզենք այն կէտը բարդաւածել:

Յերուսի խաչակրաց պատմութեան մէջ կարևոր և յայտնի կէտ մը, որուն մասին համաձայն կ'ընթանան արևելեան և արևմտեան պատմագիրք, այս է, թէ՛ Արևմտեայց կամ Լատինաց բարեկամական և սերտ յարաբերութիւնքը Փրքուն Հայոց հետ՝ եղան ոչ միայն Ա խաչակրաց ժամանակ, երբ գժտութիւն մտնելով թշնամացան ընդ Յունաց, այլ շատ իսկ կանուխ քան զայն: Իսկ որովհետև ինչպէս տեսանք թէ խաչակրաց մեծամեծ յաղթութիւնքն և յաջող ելքն յԱրևելս մասամբ մը Հայոց գործակցութեամբ եղան, այսպէս նաև այն ժամանակի Արևմտեայց վաճառականութեան և արուեստից յանկարծական բարդաւածիւնը ընդ Արևելս՝ մասամբ մը Հայոց պէս վաճառական ժողովրդեան այնպիսի սերտ յարաբերութեանց անմիջական հետևանք էր:

Եթէ պատմութեան հարցընենք, նա հաւաստեօք կը ցուցնէ մեզի, թէ՛ Միջերկրականը նախ քան զվտարորն և զՊոնտոս՝ եղաւ նաւահանգիստ փիւնիկեաց վաճառականութեանն և Արևմտեայց քաղաքականութեան, և թէ յետ այնորիկ ոչ ևս գաղղեցաւ յինքեան կրելու զնաւս և զվաճառս արևմտեան և հարաւային ծովեզերեայ աղցաց: Հայ վաճառականաց գործունեայ մասը, որ ՚ի վաղ ժամանակաց Արամայ և Արտաշեսի աշխարհակալութեանց հետեւելով Տիրացուց և Միլետացուց վաճառաշահ դաղթականութեանց հետ խառնուելով այն կողմերն հաստատուեցան. նոյն յայն րովանդակ ընթացս Հայկագունեաց, Արշակունեաց՝ ևս և Բագրատունեաց թագաւորութեան անխոնջութեամբ շարունակեց այն պատուական և կարևոր արուեստը: Զ:

ի և ը դարուց մէջ բիւզանդական տե-
 րութեան յԱսորիս, ՚ի Միջագետս և յԱ-
 փրիկէ գնացող բանակաց կերակուրն
 և կարևոր պիտոյքը՝ փոքուն Հայոց կամ
 կիլիկիայ ծովեզերեայ ժողովրդէն և շա-
 հաստաններէն կը հոյթեայթէին : Յետոյ
 գէպքին բարեպատեհ, այսինքն է խա-
 շակրաց Ա գալուստն ՚ի փոքր Հայս, և Հա-
 յոյ ցուցած հիւրընկալութիւնն և դաշ-
 նակցութիւն ընդ Լատինս՝ ձեռք ձեռքի
 կու տան և կը բանան նորանոր առպա-
 րէզներ բարգաւաճ վաճառականութե-
 փոխադարձ ընդ միմեանս : Խաշակրաց
 մեծամարմին բանակներն և սպայտա-
 կան զօրքերն, որոնք սարածուելոյն
 Հայոց շահաստանաց մէջ և տեսան ա-
 րևելեան շախրու և կերպասուց փայլը,
 բազմաթիւ նաւատորմիղքն, որոնք ան-
 ընդհատ կու գային հօն և կը պատարա-
 տուէին անցնել յԱսիա, այս ամինքն
 ալ զօրուոր պատճառներ էին վաճա-
 ռականութեան դռներ բանալու Լատի-
 նացուց ընդ Հայս : Հինաուրբ բայց հա-
 մակործան Տիւրոսի և Սիդոնի տեղ՝ կը
 բարձրանան Միջերկրականի վրայ Այաս
 կամ Լայաս, Կոտիկոս և Տարսոն, ոչ
 միայն գործարաններով և զինարաննե-
 րով, այլ նաև համախարհի վաճառուք :
 Երբ վենետկեցիք մերթ սպառնա-
 լեզք և մերթ կեզք բարեկամութեամբ
 Ալեքսիսներու, իսահակներու և կոմնե-
 նոսի ցեղի ուրիշ իշխանաց հետ առև-
 տրոյ դաշնոց մէջ էին Վուպորոնի վը-
 րայ, Բիզացիք և Գենուայիք օր քան
 զօր կը յառաջէին Միջերկրականի վը-
 րայ. այնպէս որ ըստ վկայութեան Մու-
 ըազորի ¹ և Հերէնի ², յամին 1000 Սա-
 րակինոսայ իսկ դէմ՝ յաղթական կ'ըն-
 թանային :

Երբ յամին 1098 առաջին անգամ
 խաչակիրք անցնելով փոքր Հայաստա-
 նէն՝ անոնց օգնութեամբք տիրեցին Ա-
 սորեաց և Պաղեստինու, վենետկոյ,
 Բիզոյի, Գենուացուց հասարակաց
 սուրթեան և Մարտիկոյի վաճառարարձ

նաւերն ընկերելով կիլիկիաբնակ Հա-
 յոցնաւերուն հետ, սկսան անդրադոյնս
 ևս վարիլ : Այն ժամանակէն ՚ի վեր Ե-
 րուսաղէմ, Պաղոմսոյիս, Ասկաղոն, Տիւ-
 րոս և Անտիոքիս և ուրիշ քաղաքներ
 անոնց ծաղկեալ շահաստաններն ե-
 դան : Մանաւանդ երբ յամին 1111 և
 1123 վենետկեցուց նաւատորմն յաղ-
 թելով Սարակինոսաց՝ նաւարկութիւնն
 կատարեալ ազատութիւն ստացաւ :

Սակայն ինչպէս յաջողութեամբ մը
 դիւրաւ սկսաւ տարածիլ արևմտեան
 վաճառականութիւնն յԱսիա, այսպէս
 նաև դիւրաւ կրնար ինկնալ ըստ ձախո-
 ղել բաղդին խաչակիր զօրաց և զինու-
 րութեան յախարհս անհաւատից և ՚ի
 բիւզանդական կայսրութեան : Եւ իբրք
 1188 — 1189 անկմամբ Թագաւորու-
 թեան Երուսաղեմի, Անտիոքայ, Դրի-
 բոլիի և Ալեքսանդրիոյ՝ այլազգեաց իշ-
 խանութեանը ներքև, հարկ էր որ ինկ-
 նային արևմտեաց վաճառականութիւն
 և ճարտարարուեստքն ևս : Այսպէս ու-
 ընմն Միջերկրականի կողմէն Լատինա-
 ցուց փիճակաց կամ փոքրիկ թագաւո-
 րաց անկումն, և արևելքէն Ալեքսի և
 Միքայէլ Պալէոլոգի յանկարծական
 կերպով Կ.Պօլսի վրայ միապետելն, ո-
 րոնք խորամանկ դաւաճանութեամբ
 գժտութիւն և կռիւ սերմանելով վե-
 նետկոյ, Բիզոյի և Գենուացուց հաս-
 րակապետութեանց մէջ, երկուստեք կը
 շանային խափանել Արևմտեաց վաճա-
 ռականութեան և արուեստից կապը Ա-
 րևելքի մէջ : Հերէն ³ և Մարին ⁴ կ'ըսեն,
 թէ՛ ՚ի Ս. Յովհաննէս Տ'Ազր (Աքեա) ե-
 դած պատերազմը ընդ մէջ վաճառական
 նաւուց վերոյիշեալ երեք հասարակա-
 պետութեանց՝ առ ժամանակ մի խա-
 փանեց արևմտեայ յարաբերութիւնը
 յայնմ մասին :

Ինչպէս ծաւալական զանգուած մը
 իւր առանցքին վրայ հողոված ժամա-
 նակ, երբ երկու հակակողմեան բռնու-
 թիւնն ևս յինքեան կրէ, անդէն շու-

¹ Ճառ 30, Հտ. Ա, էջ 18,
² Ճառ. ՚ի վերայ ազգ. խաշակրաց :

³ Ճառ ՚ի վերայ ազգ. խաշ, էջ 358 :
⁴ Պատմ. Հտ. Գ, էջ 298 :

տով դէպ 'ի միջակէտը կը ձգուի, և այն կէտին վրայ բարգաւաճելով բարբորովին նոր կերպարանք մը կ'առնու. այսպէս ալ Եւրոպիոյ վաճառակախնութիւնն և արուեստք, որոնք վիենտակոյ, Բիզպի և Գենուացոց ձեռքով մէկ մը իրենց նախնական շարժմունքն աօին Արևելքի մէջ, չէին կրնար բարբորովին դադրել, այլ կարող էին ուրիշ գիծ բռնել և տարբեր հանգամանք հարկելով իրենց բազդաւորութեան անուց և Արևելքի վրայ, վերագաճնալ յԱրևմուտս և յեղափոխել գողցեռ Եւրոպիոյ վաճառական, անտեսական, գուցէ քաղաքական և ուսումնական միճակը: Ուստի այս ուղղութեան գիծն էր այն ճամբան որ ուղղակի ծովով և ցամաքէն կ'առաջնորդէր Արևմտեայց 'ի փոքրն Հայս, և անոր շահաստանաց մէջ, որոնք Ասիոյ հարաւային և արևելեան կողմանց և Սև ծովու եզերքը բնակող Ժողովուրդոց վաճառակախութիւնն և արուեստներն դէպ իրենց ձգած և արդէն իսկ իրենց հետ կապած էին:

Իրացընէ 'ի սլաւոնութենէ զիտեիք թէ այնուհետև 'ի փոքրն Հայաստան կեդրոնացան արևմտեայք: Անդ Հայոց ձեռնտուութեամբք, անոր իշխանաց նըպաստամատոյց արտունութիւններով և պաշտպանողական հրովարտակք և ամեն բանէ տւելի Հայոց վաճառականաց ճարպիկ գործակցութեամբը, նոր կերպարանափոխութիւն մ'առաւ յեղիպոսս, և անոնց ձեռքով տարածեցաւ յԱսիա 'ի Հնդկաստան:

Ստուգիւ Հայ ազգն, որ տակաւին այսօր իւր վրայ կը կրէ այն կարևոր ձրից և արուեստից դրոշմը, և անոր փայլը կարծես թէ կորսնցուցած չէ, քորք Հայոց կտմ կիլիկիոյ թագաւորութեամբը, և նոյն իսկ կոստանդնի և Թորոսի Բ ժա մանակը թուով և բարտապէս շատ աղ-դեցութիւն ունեցաւ: Երախտաց վաճառակախութեան յառաջխաղացութեան ժամանակը՝ Լևոնի Բ և Հէթմոյ ատենն

եղաւ: Սակայն այն ժամանակի տուրևառութեան և անոր արգասեացը վրոյ մանրամասն զեռ չխօսած, յիշեիք մեր իմաստուն և բարեկիրթ թագաւորաց՝ առ վենետկեցիս, առ Գենուացիս և առ այլ քնկերութիւնս շնորհած հրովարտակներն և արտօնութիւնքը, զորս գեղեցիկ կերպով կ'ընծայէ մեզի Գանէտարինի իւր նոր լյս տեսած փոքրիկ երկասիրութեամբը, որուն վերնագիրն է Documenti spettanti al commercio dei Veneziani con l' Armenia, և այլն:

Մեզի հասած առաջին¹ և հնագոյն յիշատակարանն² է յամին 1201 Լևոնի Ա առ վենետկեցիս շնորհածը՝ զոր խընդրեց Հենրիկոս Տանտոյլ՝ Յակովբ Բագատոյ հիւպոտին ձեռքով: Իսկ երկրորդ արտօնութիւնը և անտիպ հրովարտակն, զոր նորբոս հրատարակեց Գանէտարինի, է այն զոր Պետրոս Տանտոյլի ձեռքով շնորհեց Հէթմոմ վենետկեցոց՝ անոնց Յակովբ Դիերոյլ Տօփի ժամանակ: Այս հրովարտակը կը յիշէ նաև Մարին³: Գոհ հրովարտակն՝ զոր Լուզովիկոս Սէրբիոզորի վիեննայի մա տննադարանէն հանելով զրկեց առ Գանէտարինի, այն արտօնութիւնն է, զոր յամին 1271 ստացաւ Լաւրենտիոս Դիերոյլ Տօփ 'ի թողաւորէն Հայոց Լիսնէ Գ: Դո արտօնութիւնն, զոր կը յիշէ Մարին և հրատարակութեամբ ծանօթացուց Գանէտարինի, է այն զոր յամին 1321 շնորհեց Լիոն Գ վենետկեցոց՝ Յովհաննէս Սորանցոյ Տօփի ժամանակ՝ անոր Միքայէլ ձիւտինիանի հիւպոտին ձեռքով: Այս հրովարտակը կորուտեալ և պակասաւոր է, բայց բուն պատճառը չի դիտցուիր: Մարին³, Դերինկ և Բարգիսոյ ուրիշ հրովարտակաց գոյութիւնը ևս կը հաստատեն վիեննայի մատնադարանին մէջ, զոր Հայոց թագաւորներն շնորհեցին վե նետկեցոց յամին 1307, 1333 և 1335: Ուր թողունք ապա յամին 1201, 1245 և յամին 1288 առած արտօնութիւն-

զէոյի և նա հարգեց Գանէտարինեայ:
 2 Պատմ. վաճառ. վենետ. Հա. Գ. էջ 157:
 3 Հա. Գ. էջ 158 և 163:

1 Այս յիշատակարանս վենետկոյ Միխիմ. բեան հարց ձեռքով գտնուեցաւ վենետկոյ գիււանասանը մէջ և զրիւտեցաւ Նիկողոս Թոմա.

քը, որոնց համար կ'ըսէ Գերինկ թէ
 Լեոն Գ շնորհաց Գննուացւոց և իրօք կը
 պտնուէին Գննուայի մատենադարանին
 մէջ: Վենետիկեցի ազնուաստոճ Գանալ
 կանոնիկոսը, որ վերջի տարիներս Գե-
 նուացւոց պատմութեան երկասիրութի
 մ'ըբաւ, ըստ նորագիւտ յիշատակարաւ
 նաց, կ'ըսէ՝ թէ բաց 'ի 1201ին տուած
 արտօնութեանէն զոր ստացաւ Օճերիոյ
 Պալլիոյ, ուրիշ երկու հրովարտակներ
 ալ կային՝ մէկը յամին 1215 և միւսը
 1220ին:

Անշուշտ Գաղղիացւոց, Գերմանացւոց,
 Սլաւոնացւոց և Անգլիացւոց ևս՝ ոչ և
 այլ արտօնութիւններ շնորհած էին մեր
 թողաւորներն: Այն յիշատակարանք
 թէպէտ և յայտնի չեն, սակայն խաչա-
 կրաց ժամանակ այն ազդաց Հայոց հետ
 ունեցած վերաբերութենէն դատե-
 լով՝ բնաւ չենք տարակուսիր. մանա-
 կանդ 'ի նկատի ունելով բարձր վերոյի-
 շեալ ազգաց իշխանակ և երեսփոխա-
 նաց ներկայ գտնուիլը Լեոնի թագա-
 դրութեան հանդիսին, որոնց քաղաքա-
 կան տեսակէտն էր Հայոց համակրու-
 թիւնը գրաւել և արեւելքի մէջ ոտնա-
 տեղի և ազգեցութիւն ունենալը: Կը
 յուսանք թէ այս մասին ուշ կամ շուտ
 նոր յիշատակարանք կը յայտնուին:

Յետ յիշատակելոյ Հայոց թագաւորաց
 արեւմտեան ազգաց շնորհած հրովարտակներն
 և անոնց ճիշդ ժամանակը, տեսներք
 այսուհետեւ համառօտիւ անոնց մէջ
 պարունակուած արտօնութիւնքը,
 յորոց օգուսններ քաղցն եւ ուրպա:

Գանձատրինի կ'ըսէ. ըստ ինքեան և
 ըստ օրինի ամենայն ազդք պարտական
 էին առանց խտրութեան չորս առ հա-
 րիւր տուրք վճարել Հայոց տէրութեանը,
 եթէ դուրս դրկած և եթէ ներս
 մտուցած վաճառուց. մինչդեռ 'ի Գաւ-
 րէժ կը վճարուէր տասն առ հարիւր:
 Ուստի Հոյ թագաւորաց մարդասիրութեամբ
 մասնաւոր առանձնաշնորհութիւն
 ունեցող և այն հարկերէն ազատ
 ժողովուրդք եղան Վենետիկցիք, Գե-
 նուացիք, ֆլորենտացիք, բայց ամե-

նէն աւելի Պարտի կոչուած ընկերու-
 թիւնն, որոնք փրանկիսկոս Պալտուչի
 Բեկորդեայ ձեռքով ընդունեցան յա-
 մին 1335 յունուար 10, և յամին 1336
 ուրիշ արտօնութիւններ ալ: Այս ըն-
 կերութենէն զատ կային Պրովենսալ-
 ցիք, Կառալայնացիք, Բիզացիք, Սի-
 կիլիացիք, Ֆրանկք, և Բերտացցի կո-
 չուած ընկերութիւնն:

Շնորհուած էր ասոնց ազատ նաւար-
 կութիւն ունենալ, շտեմարանս վաճառուց,
 տօնավաճառ կամ հրապարակ:
 Ատանայի, Սոյ, Մոպտուեստայ, Տար-
 սոնի, Անարգարայ և ուրիշ ամեն քա-
 ղաքաց և աւանաց մէջ կարող էին առանձին
 թաղ կազմել, դատաստանաբան և
 դատաւորներ ունենալ, Լեհաստանի և
 Գրանսիլվանիոյ Հայոց պէս: Արտօնութիւն
 ունէին առանձին եկեղեցի չինել և
 գերեզմանատուն, ամեն կողմ գործանոցներ
 և արուեստանոցներ կանգնել, լուսնայափոխութիւն
 ընել, և Հայոց տէրութեան գրամանատու-
 թեան և ուրիշ բարձրագոյն գործոցը
 մէջ մտնել: Ազատ մուտք և ելք ունէին
 յամենայն քաղաքս, նաւահանդիսս,
 մաքսատունս, յանցս կամբիւաց և
 արքունի ճանապարհաց բոլոր Հայաստանի
 մէջ: Բաց աստի պաշտպանուած էին
 Հայոց թագաւորաց հրովարտակք և
 անցազրերով, աներկիւղ նաւարկելու
 և կարաւանով ընթանալու արտաքոյ
 տէրութեան Հայոց, այսինքն է
 յերկիրն Սարակինոսայ, յեգիպտոս,
 յԱտրիս, 'ի Միջագետս և յամենայն
 հեռաւոր և մերձաւոր սահմանս բիւզանդական
 կայսրութեան և խուժադուժ ազդաց
 Ասիոյ, որոնց գողցես ամենուն
 պատկառելի եղած էին Հայք, Լեոնի
 Բ ժամանակ, առանց ելմտական
 տրոց և մարտից:

Այլազգեաց և Լատինաց մէջ ծագած
 վէճերն և կռիւնները Հայ իշխանները
 կը լուծէին ընդհանրապէս: Սակայն
 ըստ բողոքելոյ նոյնին, մասնաւոր
 արտօնութիւն ունէին Լատինք իրենց
 մասնաւոր վարիչներ դնել: Նաւակր-
 ծութեան և ընկղմելու մասին ևս՝ այս.

պիսի արածնութիւն տրուած էր արևմտեայց . այսինքն, եթէ վենետկեացոց և կամ ուրիշ ընկերութեան ցուկանաւ մը նաւարեկութեան հանդիպած ըլլար Հայաստանի տիւնը վրայ, այն նաւուն նպարակն և ճանապարհորդք ազատ էին, այսպէս նաև անոնց միջի վաճառքն և կահ կարասիքը, եթէ աւնոնց պատկանէին : Նոյնպէս պատասխանատու չէր, այսպիսի պարագայի մէջ եղած ուրիշ ընկերութեան նաւ մը, եթէ վենետկեացոց և կամ Գննուացւոց վաճառքը տանէր . իսկ ընդհակառակն և հակառակ պարագայի մէջ թագաւորին անկ էր : Անկտակ վենետկեացոց մը ամենայն ստացուածքն և յանձնարարական ինչքը ուրիշ վենետկեացոց մը կը յանձնէին . և եթէ ասիկայ չբախտէր դիպուածով Սոոյ արքեպիսկոպոսին խնամոցը կը յանձնուէին, Հայոց թագաւորին հրամանով :

Այս արածնութիւններովս, որ թիւզանդիոնի և Տրապիզոնի թագաւորաց տուած արածնութիւններէն շատ ընդարձակ էին և նպաստամատոյց տեսնե՞ք այն ժամանակի Հայաստանի և անոր սահմանակից աշխարհաց մէջ արևմտեան վաճառականութեան և նաւարկութեան զարգացումը :

Ըստ վկայութեան Գանէստրինեայ ¹, փոքրէն Հայոց տէրութիւնը նախ Տրապիզոնի թագաւորութեան հարաւակայմն ըլլալուն առթիւ, երկրորդ Այասի գեղեցիկ նաւահանգիստն ևս իրեն սօսանդակ դուռ ունեւրով Միջերկրականի վրայ, ամենէն մեծ վաճառատեղին էր եւրոպական ազգաց ընդ Պարսից և ընդ բոլոր Ասիոյ : Կ'երևի թէ այս քաղաքս այն ժամանակէն 'ի վեր մեծափարձամ շահաստան մը դարձաւ և բոլոր ափական աշխարհաց գանձն և զօրութիւնը առ ինքն ձգեց, որպէս հինաւորցն Տիւրքս, երբ արևմտեայց Միջերկրականի մէջ առաջին անգամ ոսք կոխեցին : Ֆրոսկարինի իւր մէկ երկա-

սիրութեանը ² մէջ, զոր դեռ այս վերջի ժամանակներս հրատարակեց Գանէստրինի, կը վկայէ՝ թէ Հնդկաստանէն բերուած վաճառուց հինաւորց վաճառատեղիքն էին շահաստանքն Հայոց, Ասորոց և եգիպտոսի, որոնք Գանայի և կաֆայի վաճառատեղիներէն մէկ դար յոռակ ծաղկեցան :

Սակայն մենք Մարգոյ բոլոյի վկայութեանը վրայ հաստատուած, կ'ըսե՞ք, թէ փքուն Հայոց վաճառատեղիքն Ասորոց և եգիպտոսի այն չրկանի վաճառատեղիներէն ևս հին էին . սրովհետև հմուտ ճանապարհորդը վերոյիշեալ տեղերուն վրայ բնաւ յիշատակութիւն չընէր առանձին, այլ միայն Այասի կամ Լայասի նաւահանգստին վրայ կը խօսի մանրամասն, և կը ցուցնէ թէ Հայաստանի այս քաղաքն էր մեծարգի և միակ շահաստանն՝ յոռակքան զտիրապետութիւն Խաչակրաց Ասորիքի և Պաղեստինու երկիրներուն, և քանի որ եգիպտոսի Սուլթաններն ազատ վաճառականութիւն չէին շնորհած արևմտեայց՝ Ալեքսանդրիոյ նաւահանգրստացը մէջ :

Այս ծանրակշիռ հեղինակի վկայութեանը նայելով, ոչ միայն եգիպտոսի և հարաւային Ասիոյ վաճառքը, այլ ևս նոնք ևս՝ զորս վենետկեցիք և Գննուացւոցոց զապմակարը կը բերէին Սև ծովով 'ի Գանա և 'ի կաֆա, կեղրոնական Ասիոյ և Գարեթի վաճառուց հետ փոխանակելու համար, ամենքն ալ Այասի նաւահանգիստը կը կեղրոնացնէին : Աստի ապա կը մեկնէին 'ի Տրապիզոն և Սև ծովու շահաստանները գընացող ամենայն վաճառքն և որոնք որ դէպ 'ի կասից ծով պիտի ընթանային : Մարին Սահուտոյ, վերագոյն կը դասէ Հայաստանի վաճառականութեան ուղին՝ Ալեքսանդրիոյ և ուրիշ աշխարհաց գծերէն . և կ'ըսէ՝ թէ Հնդկաստան գացող վաճառքն անախ պէտք էին անցնել : Ինչպէս միշտ այսպէս նաև Ռուբի-

¹ Վալու. վեհա. ընդ Հայ. և Տրապիզ. էջ 335.
² Frammenti inediti del libro V della Let-

teratura Veneta: Dei viag. Veneziani, in Arch. stor. Ital. Appendice, t. IV, pag. 97 e seg.

նեանց շրջանին մէջ՝ Հայ ազգին առ վա-
ճառականութիւնն ունեցած գործու-
նէութիւնն և ճարպկութիւնը ամեն ազ-
գաց և աշխարհաց մէջ հռչակուած էր,
կ'ըսէ Գանէստրինի¹ : Եւ անոնց սերտ
յարաբերութիւնքն Պաղեստինու, Ատ-
րիքի, Թաթարստանի, Չինաց և Եւրո-
պոյի հարաւային աշխարհաց հետ էր,
'ի մասնաւորի Կատարանացոց և Խոա-
լացոց հետ, որոնց 1293ին մեծամեծ
արտօնութիւններ ևս շնորհեցին Հայք :

Վաճառականք Հայոց, որոնց ընկե-
րակցութիւնն յուէտ փափագելի էր և
շահաւէտ տրևմտեայց՝ մեծագոյն դեր
խաղացողներ կը համարուէին ամենու-
րեք : Անոնց առաջնորդութեամբը կա-
րող էին Լատինք ոտք կոխել արևելեան
աշխարհաց և անծանօթ ժողովրդոց մէջ :
Հայք տարածուած էին Հնդկաստանի,
Ասորոց և Պարսից գլխաւոր շահաստու-
նաց մէջ, կ'ըսէ Գանէստրինի : Նոյները
կը յաճախէին Գիւրտիստանու, Կիլի-
նու, Խորասանի, Գաւրէժի, Հայէպի և
Պուրայի մէջ : Միջին Ասիոյ մէջ փոխա-
նակելով արևմտեան և փոքուն Հայա-
ստանի վաճառքն՝ 'ի դարձին կը բերէին
այն արևելեան աշխարհաց արգիւնա-
բերութիւնքը դէպ յարևմուտս : Մեծ
պողոտայն որ կը հասնէր 'ի մեծագոյն
շահաստանն՝ ուր Գաւրէժէն, միջին Ա-
սիայէն, Պարսկային ծոցէն, Հնդկա-
ստանէն, և Չինաստանէն եկած ամե-
նայն վաճառք կ'ամփոփուէին, էր Էր-
զիւուս² 'ի Բարձր Հայս : Անտի յետոյ
երկու արքունի ճամբաներ կը բաժ-
նուէին, մէկը կը տանէր 'ի մեծ շահա-
ստանն Ալեք, իսկ միւսն 'ի Տրապիզոն,
որ Անդրոնիկոսի ողբայր մահուանէն
յետոյ եղաւ Կոմնենեան տոհմէն երկու
իշխանաց աթոռանիստ, որոնք բիւզան-
դական խժոժութեան ժամանակամի-
ջոցին ապաւինած ըլլալով՝ 'ի Վրաստան,
և Խաչակրաց Կ.Պօլսի մէջ յարուցած
յեղափոխութիւնն ևս պատեհ առնելով
թագ կապեցին անդ, ուր բաղմախիւ

և պատուական ընտանիք ևս խոյս տը-
ւած էին : Այս նոր թագաւորութեան
սահմանն կը ձգուէր փասիս դեանէն մին-
չև ցհրուանդանն Կարաթիքի. և անոր
իշխանաց շուայրութիւնն՝ որ Կ.Պօլսոյ կու-
մնենեանց և Պալէոլոգներու շուայրութի-
նէն վար չէր մնար, ընդարձակ դուռ
կը բանար Հայոց և Լատինաց զաշնա-
կից վաճառականութեանը, և էր աղ-
բիւր անսպառ դանձուց :

Հոն, քառվկայութեան Բեկլուղ-դեպոյ,
ամ քառ ամէ կը վաճառէին 14,000
կուշինդայ³, Տարևոր տօնավաճառով
մը բոլոր քաղաքը ճոխ վաճառատեղի
կը դառնար Պաղտատէն և Գայիրէէն
բերուած ոսկի անկուածոց, Հնդկա-
ստանէն և Պարսկաստանէն եկած պա-
տուական ականջը, շինական և հընդ-
կային մետաքսէ և բամբակեայ կերպա-
սուցն և վերբենտեան կարմրագոյն կը-
տաւոց և այլ և այլ վաճառուց, զորս
անպակաս կը բերէին Հայոց, Վենետ-
կեցոց, Գենուացոց, փռանկաց և Յու-
նաց վաճառականք, կ'ըսէ նոյն հեղի-
նակն⁵ :

Կ.Պօլսոյ և Տրապիզոնի գործարան-
ներէն աւելի նշանաւոր էին փոքուն
Հայոց Գամկլոյոյց և Անկիւրական նըր
բահիւս մազեղինաց գործարանքը : Վե-
նետկեցիք ամենէն աւելի յարգ տալով
անոր՝ իրենք ևս մասնաւոր արտօնութիւ-
շատ գործարաններ հաստատեցին Սը-
սոյ, Ամասիայի, Սամբրոնի և Հայաստա-
նի ուրիշ քաղաքաց մէջ, յորս արպէն
խուռն բազմութեամբ կ'երթեկեկէին Ի-
տալացիք այն ճանապարհովը՝ որ 'ի Քե-
րաստանէն կը տանէր դէպ 'ի Թրքաթի,
և անտի՝ 'ի փոքրն Ռսիա և յերոպէ :
Բառ վկայութեան Մարգոյ Բուլջի բաց
'ի վերջոյշեալ գործարաններէն՝ էին
նաև մեծագին դիպակաց բազմաթիւ
գործարանք, որոնց նիւթը Հայք իրենց
երկրին մէջ կը մշակէին և անով արև-
մտեայց հետ մեծ փոխանակութիւն
կ'ընէին :

¹ Վաճ. Վենտ. ընդ Հայ. և Տրապիզոնի, էջ
338.

² Մէկ կուշինդան է 100 քիլոկրամ :
³ Բեկլուղդի, էջ 11 և 13 :

Մարինի¹ տուած նկարագրէն դա-
տելով, Հայոց վեճեակեցւոց և Տրապի-
զոնի հետ ըրած վաճառականութիւնը
մեծազոյն և կարևոր կը համարէր: Հե-
ղինակը կը վկայէ թէ ամ ըստ ամէ 7
տորմիդը նաւաց կը մեկնէին 'ի վեճեա-
կոյ Արևելից և արևմտեան վաճառուց
համար: Բայց անդէն կը յաւելու, թէ
այն նաւատորմից մին ամբողջապէս
Հայաստանի համար էր և երկրորդ մ'ալ
Տրապիզոն երթալու: Իսկ մնացած հին-
գըն Ռուսմանիոյ, Դանայի, Կիպրոսի, Ե-
գիպտոսի, Գաղղիոյ, Սպանիոյ, Բորդու-
ղալի, Ֆրանտորայի, Անգղիոյ և Պէրպէ-
րիտանի տէրութեան վաճառուց հա-
մար:

Որչափ առաւել ևս համարելու ենք
ուրեմն Գենուայուց, Բիզացուց և ըս-
լոր միւս արևմտեան ընկերութեանց
տորմիդներն, որոնց առևտրական վե-
րաբերութիւնքն և արտօծութիւնքն, ինչ-
պէս սեռանք, կանուխ էին ժամանա-
կաւ և աւելի սերտ Միջերկրականի և
Կիլիկիոյ նաւահանգստաց մէջ: Ուր թե-
զունք ապա անոնց կարաւանով կամ
ցամաքային ճանապարհաւ ըրած վա-
ճառականութիւնն էր զիւրուսի և Դաւ-
րէժի ուղղութեամբը:

Այսօր նաւահանգստէն զէպ 'ի յԱ-
րևմուտս գնացող վտճառքն էին, գիւնի,
պղպեղ, գինի, խնկիդէնք, եղեգնեակ,
տարուս, խէժ, շաքար, նամեմուռնք և
դեղորայք: Բամբակ, երկաթ, պղինձ,
ակնագ, քրքում, իւղ, մետաքս, և
դիպակներ, չուխսոյի այլ և այլ սե-
սակներ և ակուռնք:

Իսկ Մեծին Հայոց Արաբատականի
գլխաւոր շահաստանէն (Դաւրէժէն) ե-
լած գլխաւոր վաճառքն էին ակնաքի
մետաքս (erudo), խաչնդղ, մամուռ,
երկնագոյն ծոյու, մետաքսեայ և ու-
կեքը գորգեր, և այլն: Ուր թողունք
ապա բոր Հայաստանի ներքին և ե-
կամուտ բերոց և վաճառուց բազում
թիւնն, որովք Հայ ազգը նոյն ժամանակ
ոչ միայն լատինաց կարևոր պիտոյքը

կը հայթայթէր, այլ յաճախ փոխանա-
կելով արևմտեան վաճառուց հետ ա-
նոնց մեռած ապրանքը կը կենդանա-
ցընէր, և եւրոպիոյ վաճառականութեան
նոր զարկ և հոգի կու տար:

Մարին' վեճեակոյ վաճառականու-
թեան եղ հատորին մէջ կ'ըսէ, թէ' ա-
մեն տարի 6էն մինչև եօթն նաւեր
կը զրկէին 'ի Տրապիզոն և նոյնչափ ևս
'ի փոքրն Հայաստան, և 'ի համբաւա-
տենչ շահաստանն Այսա, լի վաճառուք
վեճեակոյ, իտալիոյ և արևմտեան ու-
րիշ աշխարհաց: Իւրաքանչիւր ցուկա-
նաւ կը վերագառնար առ զշխոյն ծո-
վուց վեճեակի, բնոնաւորեալ արևե-
լեան ազնիւ վաճառուք, որոնց զինը
առ նուազն 100,000 Տէգիւնի կը հաս-
նէր: Ուստի վեճեակեցւոց միայն Հայա-
ստանի և Տրապիզոնի հետ ըրած տա-
րեկան վաճառուց շահը մէկ ու կէս մի-
լիոնի կը հասնէր: Սակայն պէտք է հա-
մարիլ թէ այդ գումարը պարզապէս
արևմտեան վաճառուց փոխանակու-
թեանն արգասիք էր, զորս կը տանէին
'ի Հայս և 'ի Տրապիզոն:

Գանէստորինի 'ի նկատի ունելով Մա-
րինի վկայութիւնը, թէ եօթը գիծեր
կային, որովք վեճեակեան նաւերն ամ
ըստ ամէ կը նաւարկէին յԱրևելս և յԱ-
րևմուտս, այդ գծերուն իւրաքանչիւրին
վրայ 7 ցուկանաւ հաշուելով ամբողջը
կը լինին 50 ցուկանաւ: Անոնց իւրաքան-
չիւրին վաստակը հաշուելով 100,000
Տէգիւն 50 նաւուց տարեկան և միջին
հաշիւը կ'ըլլայ 5,000,000,000 Տէգիւն:
Գումար մը, որ ըստ հաշուելոյ կիպրա-
բիոսի և Լիբերի' 100,000,000,000 Ֆր.
կը հասնի:

Արդ եթէ մէկ տարուան մէջ վեճեա-
կեցւոց նաւքն այսչափ կը շահէին այն
արևելեան վաճառականութեանէն, և որ
զարմանալին է միայն արևմտեան վա-
ճառուց փոխանակութեամբ, ըստ վը-
կայութեան Գանէստորինեայ, ուրեմն
ինչ անբաւ գումարաց պիտի հասնէր
արևելեան թանկագին վաճառուց ե.

1 Պատմ. վաճ. վեճեակ. Հա. Բ, էջ 194.

կած ոսկին և արծաթն, զորս կը փոխադրէին յԱրևմուտս, Գեներալայիք, Բիզպայիք, Բերուցցի ընկերութիւնը, Բրովանայիք, Բարտի ընկերութիւնը, Մարսիլիայիք, Ֆրանկիք, Փորենտալցիք, Կատալանիք, Սիկիլիայիք և Գերմանայիք առ հասարակ՝ յընթացայ 500 տարուան, եթէ ժ դարէն համարիք այն վաճառականութեան սկզբնաւորութիւնը մինչև ցառումն Կ.Պոլսոյ 'ի Տաճկաց, ցամն 1468. մանաւանդ եթէ ենթադրենք թէ այն վաճառականութիւնն երթալով հետզհետէ բարգաւաճեցաւ քան թէ նուազեցաւ: Հաւանօրէն ընդհանուր և միջին գումարն ինն հարիւր հազար բիւրէն, և կամ լաւ ևս ըսելով, 450,000,000,000էն աւելի էր քան թէ պակաս: Եթէ արևմտեան վաճառուց փոխանակութիւնն այսչափ էր, ուրեմն որչափ անհունս մեծ և կրած պիտի բլլար արևելեան պատուական վաճառքէն եղած ամբողջական եկամուտն և բոլոր Հայաստանի և Տրապիզոնի թագաւորութեանց գանձուց առատութիւնը, զորս այնչափ դարուց մէջ և այլ և այլ ճանապարհներով, գաղթականութեամբք և խաչակրաց արշաւանք ամբարեցին Արևմտեայք: Պատմութիւնն ճիշտ կերպով մեզի չէ կրցած աւանդել, և մենք ալ անբաւական կը համարինք գմիզ առ այս:

Սակայն որչափ որ չենք կարող այն ժամանակամիջոցին եղած արևմտեան վաճառաշահութեան եկամուտը հաշուել, սակայն կրնանք և պէտք ենք այսպիսի արգարայի եղբակացութիւն մ'ընել, այսինքն է. բովանդակ սակեձեղուն և պատուական քարերով սըճնած պալատներն և հոյակապ եկեղեցիք Գաղղիոյ, Գերմանիոյ և Իտալիոյ, որոնք զոյգ ընդ վենետիկոյ՝ հնութեան հետքը կը կրեն յիջեանս, Տրապիզոնի թագաւորութեան, և բիւզանդական կայսրութեան և մասամբ մը Հայոց տէրութեան զանձովն ելան կանգնեցան, և պիտի մնան ցլաւիտեանս ժամանակաց 'ի զարմանս ազգաց: Եւ ո՞վ դիտէ թէ գեղեցիկ հանձարն և արուեստոյի

տոթիւնք անգամ, որո՞ք անոնց գմբեթաց վրայ կը փոյլին, զեռ այսօր, արևելեան մտաց և վեճմութեան արդասիք չպիտի լինին: Աւրեմն անոնց հետ 'ի միասին մեծ է գարծեալ Հայ ազգն և աշխարհն յանիւս բաղդին արևմտեան վաճառականութեան: Այսուհետև տեսնենք զՀայս յանիւս ճարտարարուեստից արևմտեայց, որ զուգակից է առաջնոցն:

Ինչպէս ոսկին և արծաթն չեն զարտանց արուեստից, այսպէս ուրեմն նաև արուեստը չէին կարող սկսել և տարածուիլ՝ առանց հաղորդակցութեան ազգաց: Այս հաղորդական ազգերէն մին եղաւ Հայ ազգը, որ զոյգ ընդ Յունաց գիտցաւ յայսմ ևս մեծադոյն դեր խաղալ: Առ այս հարցընենք զպատմութիւնն:

Քաջահամուտն Հերէն, իւր խաչակրաց ազգեցութեանը վրայ յօրինած երկասիրութեան մէջ, յետ ըսեալ թէ եւրոպական ազգաց մէջ մտած արուեստից հանգամանքներն և կարևորութիւնն անկարելի է բոլորովին դիտել և ամփոփել 'ի միասին, զորս խաչակրաց ժամանակամիջոցին յԱրևելից ընդունեցաւ Արևմուտք, այսպէս կը համարուէ զանոնք: Ա, Արուեստն անկանկարելի կամ գործելոյ զմետաքս. որով յառաջ եկան և կու գան միշտ այնքան զանազանութիւնք պատուական գիպակաց և Եւրոպիոյ զանազան աշխարհաց մէջ մեծ ազգեցութիւն կ'ընեն ստատական կենաց վրայ: Բ. Արուեստը, որուն յուսալտոցութիւնը առաջնոցն հետ միշտ զոյգ ընթացեր է, է ներկարարութիւնը կամ՝ արուեստն թափախութեան: Զայս իսկ յԱրևելից ընդունեցաւ Արևմուտք, որ մատակարարած էր միշտ փիւնիկեցւոց ժամանակէն 'ի վեր լուազոյն նիւթեր և սքանչելի դոյներ: Գ. Աւրիշ արուեստ մը որ յատուկ կերպով յարգ և կարևորութիւն ստացաւ աշխարհի վաճառականութեան մէջ և մեծ ազգեցութիւն ունեցաւ ամեն ժողովրդեան վրայ, է շաքարագործարիւնն, որուն նիւթը եղեգնեակ (canna) առատ

որէն կը գտնուէր յԱրևելս: Գ. Պաղ-
լեղի, քրքուձի և շնդակի կիրառու-
քիւնն: Ե. Ճարտարապետութիւն. Զ.
Քանդակագործութիւն. Է. Նկարչու-
քիւն. Ը. Գիտութեանց և գեղեցիկ ա-
րուեստից և մատենագրութեան ձա-
շակն հաւատարապէս արգասիք են ա-
րևելեայց ազդեցութեանը:

Արդ 'ի բաց առեալ վերջին շորս ա-
րուեստները, որոնք առանց տարակու-
սի՝ յունական հունճարոյն և բիւզան-
դական ժամանակին ուղղակի կը պատ-
կանին, որք յետ անկման է . Պոլսոյ, յոյն
տարերաց գաղթականութեամբը տա-
րածեցան յԵւրոպա, մնացածները, կըը-
նանք ըսել, թէ հայ հունճարոյ գիւտ են:
Մենք կը ըսենք, թող հետագայ հաւա-
ստիքները խօսին, Յերաւի նախ Հերէնի
յիշատակած այս արուեստից նիւթերն,
ըստ վկայութե գրուէստրինեայ¹, Հա-
յոյ մեծ շահատանէն, այսինքն Այսսի
նաւահանգստէն կը զրկուէին յԱրև-
մուտս. Բ. առանց մերժելու այն իրաց
կիրառութիւնը նաև յԱսորիս, 'ի Գրիբու-
լի, 'ի Տրապիզոն, 'ի Խորասան, 'ի Դաւ-
րէժ և յԵրզնուձ, կ'ըսենք ընդ Մար-
գոյ Բաղլի և ընդ Գանէսարինեայ, թէ
Փորուն Հայոց՝ Սոյո, Ամասիայ, Սամ-
սոնի և Այսսի մէջ աւելի կը կազմուէին,
և թէ անոնց գործակից էին բազմաթիւ
վենետկեցիք և Գենուացիք. Գ. Հերէն
անդամ կը հաստատէ նոյն երկասիրու-
թեանը մէջ, թէ պաղլեղի, լեղակի,
Մետաքսագործութեան, եղեգնակ բու-
սոյ կամ շաքարագործութեան կիր-

առութիւնը ԺԲ և ԺԳ դարուց մէջ ան-
ցաւ յԵւրոպա. նախ ծաղկեցաւ Սիկի-
լիոյ, Փլորենտիոյ և վենետկոյ մէջ, և
ապա տարածուեցաւ յաղջոյն Արևմու-
տըս, թէպէտ և անոնց ստոյգ պատմու-
թիւնը մեզ անյայտ է: Մարին՝ աղօտ
ըլլա մ՝ ևս կուտայ մեզի. նա յամին 1248
թուականին գրուած մէկ յիշատակա-
րանին մէջ կ'աւանդէ, թէ 60 տարի յա-
ռաջ Լուդայէն եկող գաղթականաց
ձեռքով և առաջին անգամ 'ի վենե-
տիկ սկսան մետաքսագործութեան ա-
րուեստը:

Սակայն Գանէսգրիներ յառաջ անց-
նելով՝ Մարգոյ Բաղլի վկայութեամբը
բողբովին կը փարատէ այս մասին վե-
րաբերեալ խորհրդական մթութիւնը,
և կը հաստատէ թէ ԺԳ դարու մէջ շատ
հայազգի վաճառականք և արուեստա-
ւորք հաստատուեցան 'ի վենետիկ, ո-
րոնք արտօնութեամբ առանձին թաղ
և վաճառատեղի ունեցան: Անոնցմէ ո-
մանք կը բնակէին Եփեսոսոյ տանը մէջ,
որ Սուրբ Յուլիանէ եկեղեցւոյն կողմը
կ'ինկնար, զոր Սեբաստիանոս՝ Եփեսի
Տօժին թողը Մարկոս Եփեսի կտակաւ
Հայոց թողուցեր էր. որովհետև իւր
հայրն երկայն ժամանակ 'ի Հայաստան
կեցած ըլլալով, մասնաւոր համակրու-
թիւն ունէր առ Հայս: Մի և նոյն հե-
ղինակը կը յաւելու թէ վենետկոյ փո-
ղոյններէն մին ևս Ջուլֆա կամ Ջուղա
կը կոչուէր յանուն Ջուղա քաղաքէն
եկող Հայոց, զոր Շահ Աբասը կործա-
նեց, որ անընդունելի է գիտնոց և ոչ է
ստոյգ:

¹ Վաճ. վենա, ընդ Հայ. էջ 338:

կը շարունակուի: